ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հուլիսի 2021 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի №727Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՇԻՆ ԱՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՇԻՆ ԱՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հուլիսի 15-ին դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 6 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի №727Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Սոլակ-2» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0632 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0632 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտ է ներկայացնում Հանձնաժողով, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 13 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի հուլիսի 20-ի գրությամբ հայտնել է, որ նախատեսում էր ամբողջությամբ ավարտել Կայանի շինարարական աշխատանքները, սակայն ինչ-ինչ պատճառներով աշխատանքի ավարտին դեռևս մնացել են տեխնիկական բնույթի որոշակի խնդիրներ, այդ թվում՝ կապված փաստաթղթավորման, Կայանի էլեկտրականության մոնտաժման հետ,

ե) ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, Հանձնաժողովի դիտարկմամբ, ԼԷ №0632 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը ենթակա է երկարաձգման Ընկերության կողմից հայցվող 6 ամիս ժամկետով: Իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է նաև, որ Ընկերությունը խախտել է Կարգի 76-րդ կետի պահանջը, այն է՝ հայտը սահմանված լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից առնվազն 15 աշխատանքային օր առաջ ներկայացնելու փոխարեն ներկայացրել է 13 աշխատանքային օր առաջ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի 78-րդ կետը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի «ՇԻՆ ԱՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սոլակ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №727Ա որոշմամբ «ՇԻՆ ԱՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0632 լիցենզիայով ամրագրված «Սոլակ-2» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգել 6 ամիս ժամկետով, ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի օգոստոսի 3-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի փետրվարի 3-ը»

բառերով, իսկ «մինչև 2040 թվականի օգոստոսի 3-ը» բառերը՝ «մինչև 2041 թվականի փետրվարի 3-ը» բառերով:

2. «ՇԻՆ ԱՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0632 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Սոլակ-2» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հուլիսի 7-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված №O.AB.100.12CIB.PIED.0.10795.21 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 3 772 500 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) դրամ գումարից 1 886 250 (մեկ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր հիսուն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 3 772 500 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի մարտի 20-ը գործողության ժամկետով:

3. Կարգի 76-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 3-ից, բացառությամբ որոշման 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հուլիսի 2021թ.